# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11.12.2024 ք. Երևան

Սույն թվականի դեկտեմբերի 11-ին, ժամը 11:00-ին <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով (երկրորդ փուլ) Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակի 1-ին փողոց 1-ին նրբանցք 61 հասցեում նախատեսվող արտադրական շինություն կառուցելու գործունեության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկում:

**Ելույթ ունեցան՝**

Հանրային լսմանը մասնակցում էին Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Էլլադա Արամյանը, Աջափնյակ վարչական շրջանի ներկայացուցիչ Սերոբ Սարգսյանը:

Բացման խոսքով հանդես եկավ Հ.Մեսրոպյանը - <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ մասնագետ: Ներկայացրեց փորձաքննության գործընթացը, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և նախատեսվող միջոցառումները, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները:

Նախագծի ճարտարապետը ներկայացրեց նախատեսվող գործունեությունը, դրա տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Ա.Մինասյան, ներկայացվեց շինարարության աշխատանների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող մոնիթորինգային աշխատանքները:

Ծավալվեց քննարկում կառուցապատման աշխատանքների, կոմունիկացիաների իրականացման, շինարարության կազմակերպման հետ կապված հարցեր: Բարձրացված հարցադրումներին տրվեցին պատասխաններ նախագծի ճարտարապետի և բնապահպան մասնագետի կողմից:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ մասնագետ Հ.Մեսրոպյանը ամփոփեց հանրային լսումները:

**Դիտողություններ և առաջարկություններ**

Չկան

**Հանրային լսումների արդյունքում մասնակիցները որոշեցին՝**

- Հավանություն տալ նախատեսվող գործունեությանը:

**Վարող և Քննարկումների պատասխանատու – Հ.Մեսրոպյան**

Ձեռնարկողի ներկայացուցիչ Ա.Մինասյան